Հավելված 7[26]
«ԿԲԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/12»* ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԿԲԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/12-2

ք. Երևան «09» հուլիսի 2021թ.

«Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ, ի դեմս տնօրեն Ս. Նազինյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և <<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ -ն, ի դեմս տնօրեն Սերգեյ Հակոբյանի /ՆՔ 000596213,տրված 012-ի կողմից, 06.11.2013թ./, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ ԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ շինարարական աշխատանքը (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 50 օրացուցային օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

---

[26] *Սույն հավելվածը հրավերից հանվում է, եթե գնման առարկա չեն հանդիսանում շինարարական աշխատանքները:*

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օր (առնվազն 365 օրացուցային օր): Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:[27]

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

---

[27] *Սույն կետը հանվում է պայմանագրի նախագծից, եթե գնման առարկա հանդիսացող շինարարական ծրագիրը պահանջում է նախագծային փաստաթղթեր:*

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **9 828 000** (ինը միլիոն ութ հարյուր քսանութ հազար) ՀՀ դրամ, որից **1 638 000** (մեկ միլիոն վեց հարյուր երեսունութ հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը, ընդ որում՝

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[31] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և *արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների* աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն *պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք)* ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման

---

[31] *Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սպանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:*
Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Եթե պայմանագիրն իրականացվում է ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով.

1) Կապալառուն պատասխանատվություն է կրում ենթակապալառուի պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար.

2) պայմանագրի կատարման ընթացքում ենթակապալառուի փոփոխման դեպքում Կապալառուն գրավոր տեղեկացնում է Պատվիրատուին՝ տրամադրելով ենթակապալի պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները՝ փոփոխությունը կատարվելու օրվանից հինգ աշխատանքային օրվա ընթացքում:[33]

8.7 Եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն: Ընդ որում, կոնսորցիումի անդամի կոնսորցիումից դուրս գալու դեպքում պայմանագիրը միակողմանիորեն լուծվում է և կոնսորցիումի անդամների նկատմամբ կիրառվում են պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցները:[34]

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի

---

[33] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում ենթակապալի պայմանագիր կնքելու միջոցով:*

[34] *Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի իրականացվում համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով:*

լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:[35]

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ	<<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
ք. Երևան Աճառյան փ. 2-րդ նրբ. շենք 2.	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ.,
հվհհ 00886932	8շ., 118բն.
ԱյԴի Բանկ ՓԲԸ	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
h/h 11813017106900	Հ/Հ 19300149115100
Հեռ. 010 61-70-90	ՀՎՀՀ 01259436
էլ. փոստ՝ ncat.gnumner@mail.ru	էլ. փոստ՝ hakobyan.construction@mail.ru
---------- (ստորագրություն)	---------- (ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

---

[35] *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և պայմանագրի գինը չի գերազանցում գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա սույն կետը խմբագրվում է՝ վերջինից հանելով 3-րդ նախադասությունը, իսկ 4-րդ նախադասությունը խմբագրվում է՝ «, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները» բառերը փոխարինելով «և» բառով: Սույն կետը հանվում է պայմանագրից, եթե պայմանագիրը չի կնքվում "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա:*

Հավելված թիվ 1
« 09» հուլիս 2021թ. կնքված
«ԿԲԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/12» ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

ՀՀ ԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ - Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ

ՀՀ	Աշխատանքների անվանումը	չ/մ	ծավալը	Միավորի արժեքը /հազ. դրամ/	Ընդամենը /հազ. դրամ/	Ընդհանուր արժեքը /տոկոս/ %
1	2	3	4	5	6	7
	N1-1 Արտաքին տեսքի բարեկարգման աշխատանքներ					
	Քանդման աշխատանքներ					
1	Ե/բ բարձակային պատշգամբների քանդում	$մ^3$	1.50	9.890	14.835	
2	Գլխավոր աստիճանների հենապատի թասակների ապամոնտաժում (հետագա վերատեղադրման համար)	$մ^2$	6.0	4.619	27.713	
3	Ց/Ա հարթաշերտի քանդում	$մ^2$	6.0	0.495	2.967	

4	Գլխավոր աստիճանների հարթակի բազալտե սալիկների քանդում	մ²	24.0	4.619	110.852	
5	Ց/Ա հարթաշերտի քանդում	մ²	24.0	0.495	11.868	
6	Գլխավոր աստիճանների հատիկավոր բազալտե աստիճանների ապամոնտաժում	գմ	93.0	1.811	168.443	
7	Աստիճանների և հարթակի տակ բետոնե շերտի քանդում	մ³	2.80	9.890	27.693	
8	Մետաղական ճաղաշարերի ապամոնտաժում	տ	0.1	23.094	2.309	
9	Վերատեղադրվող ճաղաշարերի ներկի քերում	մ²	6	0.342	2.049	
10	Տարածքի մաքրում, աղբի հավաքում, տեղափոխում եւ բարձում ինքնաթափ մեքենաների վրա	տ	12.0	2.141	25.694	

11	Աղբի տեղափոխում մինչև 13կմ	տ	12.0	1.682	20.188	
	Ընդամենը %				**414.614**	5.06%
	Կառուցողական աշխատանքներ					
1	Բազալտե սրբատաշ քարերի վերականգնում, թասակների վերատեղադրում	մ²	6.0	8.663	51.975	
2	Պատերի բազալտե սրբատաշ քարերի վերականգնում, վերատեղադրում	մ²	5.5	7.219	39.703	
3	Ամրան Ø6AcI բազալտե քարերի վերականգնման համար	տ	0.0225	477.141	10.736	
4	Ցեմենտ-ավազե շաղախ բազալտե քարերի վերականգնման համար	մ³	1.0	20.449	20.449	
5	Բազալտե սրբատաշ քարե շարվածքի մաքրում հղկում, նաև աստիճաններ հենապատերով	մ²	68.0	1.337	90.903	

6	Բազալտե սրբատաշ քարե շարվածքի մակերևույթի լվացում քիմիական լվացող լուծույթով	մ²	75.0	0.518	38.847	
7	Գլխավոր և երկրորդական երկու մուտքերի դեկորատիվ տարրերի ու ծածկարանների արտաքին երեսապատում ալյուկաբոնդե սալիկներով կոնստրուկտիվ էլեմենտների հետ միասին, ալյումինե կարկասով	մ²	128.0	20.380	2,608.627	
8	Ալյուկաբոնդե երեսապատման ալյումինե կարկասի համար մետաղական կառուցվածքի իրականացում □40x40x3.0մմ խողովակներով	տ	1.28	101.195	129.530	
9	Քառակուսի կտրվածքի մետաղական խողովակ □40x40x3.0մմ	տ	1.28	681.631	872.487	
10	Մետաղակառուցվածքների յուղաներկում 2 շերտ	տ	1.28	41.907	53.641	
11	Պատրաստի արծաթափայլ խողովակավոր այլումինե ճաղաշարի տեղադրում, h=90սմ	գմ	13	22.555	293.214	
12	Վերատեղադրվող մետաղական ճաղաշարերի յուղաներկում 2 շերտ	մ²	24	1.048	25.144	

13	Ծածկարանների կախովի առաստաղի պատրաստում գունավոր շերտավոր պլաստիկից, մետաղական հիմնակմախքով	մ²	34.0	6.833	232.337	
	Ընդամենը %				**4,467.593**	54.55%
	<u>Ծածկարան - 1 /3 հատ/</u>					
1	Ծածկարանի մետաղական հիմնակմախքի պատրաստում	տ	0.179	75.893	13.599	
2	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □50x30x3մմ	տ	0.179	511.197	91.601	
3	Դյուբել M10	հատ	24	0.075	1.804	
4	Անցքերի շաղափում պատերում Φ 10մմ, L=150մմ	հատ	24	0.501	12.031	
5	Ծածկույթի պատրաստում ցինկապատ գունավոր պրոֆիլավոր թիթեղից КП-21-0,5մմ	մ²	9.0	4.866	43.795	
6	Գոգնոցի պատրաստում հարթ գունավոր ցինկապատ թիթեղից d=0.5մմ /ձեւավոր տարր/ b=330մմ	մ²	2.48	5.108	12.642	

7	Մետաղակառուցվածքների յուղաներկում 2 շերտ	տ	0.179	31.429	5.632	
	Ընդամենը %				**181.104**	2.21%
	Ծածկարան - 2՝ /2 հատ/					
1	Ծածկարանի մետաղական հիմնակմախքի պատրաստում	տ	0.049	75.633	3.694	
2	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □50x30x3մմ	տ	0.049	509.449	24.881	
3	Դյուբել M10	հատ	8	0.075	0.599	
4	Անցքերի շաղափում պատերում Φ 10մմ, L=150մմ	հատ	8	0.500	3.997	
5	Ծածկույթի պատրաստում ցինկապատ գունավոր պրոֆիլավոր թիթեղից ԿՊ-21-0,5մմ	$մ^2$	2.4	4.849	11.639	

6	Գոգնոցի պատրաստում հարթ գունավոր ցինկապատ թիթեղից d=0.5մմ /ձեւավոր տարր/ b=330մմ	մ²	0.66	5.091	3.360	
7	Մետաղակառուցվածքների յուղաներկում 2 շերտ	տ	0.049	31.321	1.530	
	Ընդամենը %				**49.699**	0.61%
	<u>Ծածկարան - 2 /2 հատ/</u>					
1	Ծածկարանի մետաղական հիմնակմախքի պատրաստում	տ	0.066	71.662	4.730	
2	Քառակուսի կտրվածքի մետաղական խողովակ □40x40x3մմ	տ	0.066	482.698	31.858	
3	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □80x30x3մմ	տ	0.0257	482.698	12.381	
4	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □60x30x3մմ	տ	0.060	482.698	28.914	

5	Դյուբել M10	հատ	16	0.071	1.136	
6	Անցքերի շաղափում պատերում Φ 10մմ, L=150մմ	հատ	16	0.473	7.573	
7	Ծածկույթի պատրաստում ցինկապատ գունավոր պրոֆիլավոր թիթեղից ԿՊ-21-0,5մմ	մ^2	5.6	4.595	25.731	
8	Գոգնոցի պատրաստում հարթ գունավոր ցինկապատ թիթեղից d=0.5մմ /ձեւավոր տարր/ b=330մմ	մ^2	1.32	4.823	6.367	
9	Մետաղակառուցվածքների յուղաներկում 2 շերտ	տ	0.066	29.677	1.959	
	Ընդամենը %				**120.648**	1.47%
	<u>Գլխավոր մուտքի ծածկարան</u>					
1	Ծածկարանի մետաղական հիմնակմախքի պատրաստում	տ	0.821	71.188	58.467	

2	Քառակուսի կտրվածքի մետաղական խողովակ □120x120x4մմ	տ	0.095	479.508	45.515	
3	Մետաղական խողովակ Φ127x4մմ	տ	0.081	479.508	38.725	
4	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □80x60x4մմ	տ	0.528	479.508	253.382	
5	Քառակուսի կտրվածքի մետաղական խողովակ □40x40x2.5մմ	տ	0.092	479.508	44.134	
6	Մետաղական խողովակ Φ57x3մմ	տ	0.025	479.508	12.069	
7	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.086	102.080	8.807	
8	Թերթապողպատ — 12x170x170մմ	տ	0.0163	479.508	7.826	
9	Թերթապողպատ — 16x280x280մմ	տ	0.0591	479.508	28.339	

10	Թերթապողպատ — 8x270x270մմ	տ	0.0071	479.508	3.424	
11	Թերթապողպատ — 8x70x70մմ	տ	0.0037	479.508	1.784	
12	Խարսխային հեղույս M20	հատ	24	0.141	3.385	
13	Մետաղակառուցվածքների յուղաներկում 2 շերտ	տ	0.908	29.480	26.756	
	Ընդամենը %				**532.612**	6.50%
	Ծածկարան - 3					
1	Ծածկարանի մետաղական հիմնակմախքի պատրաստում	տ	0.107	75.635	8.125	
2	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □60x40x3մմ	տ	0.060	509.463	30.659	

3	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □40x20x2.5մմ	տ	0.010	509.463	4.952	
4	Խարսխային հեղույս M16	հատ	6	0.112	0.674	
5	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □60x30x3մմ	տ	0.009	509.463	4.417	
6	Քառակուսի կտրվածքի մետաղական խողովակ □60x60x4մմ	տ	0.029	509.463	14.703	
7	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.008	108.457	0.842	
8	Թերթապողպատ — 16x120x120մմ	տ	0.0072	509.463	3.689	
9	Թերթապողպատ — 8x30x70մմ	տ	0.0005	509.463	0.265	

10	Խարսխային հեղույս M20	հատ	8	0.150	1.199	
11	Մետաղակառուցվածքների յուղաներկում 2 շերտ	տ	0.115	31.322	3.608	
	Ընդամենը %				**73.133**	0.89%
	Ծածկարան - 4					
1	Ծածկարանի մետաղական հիմնակմախքի պատրաստում	տ	0.142	74.591	10.560	
2	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □60x40x3մմ	տ	0.081	502.429	40.682	
3	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □40x20x2.5մմ	տ	0.012	502.429	5.863	
4	Խարսխային հեղույս M16	հատ	6	0.111	0.665	

5	Ուղղանկյուն կտրվածքի մետաղական խողովակ □60x30x3մմ	տ	0.009	502.429	4.356	
6	Քառակուսի կտրվածքի մետաղական խողովակ □60x60x4մմ	տ	0.040	502.429	20.228	
7	Ներդիր էլեմենտների տեղադրում	տ	0.008	106.959	0.830	
8	Թերթապողպատ — 16x120x120մմ	տ	0.0072	502.429	3.638	
9	Թերթապողպատ — 8x30x70մմ	տ	0.0005	502.429	0.261	
10	Խարսխային հեղույս M20	հատ	8	0.148	1.182	
11	Մետաղակառուցվածքների յուղաներկում 2 շերտ	տ	0.149	30.890	4.613	
	Ընդամենը %				**92.878**	1.13%
	Ծածկարաններ **Գլխավոր ծածկարան, 3 և 4**					

1	Ծածկույթի պատրաստում ցինկապատ գունավոր պրոֆիլավոր թիթեղից ԿՊ-21-0,5մմ	մ²	14.0	6.025	84.349	
2	Գոգնոցի պատրաստում հարթ գունավոր ցինկապատ թիթեղից d=0.5մմ /ձեւավոր տարր/ b=700մմ	մ²	11.20	6.324	70.834	
3	Տանիքի մոնտաժման ցինկապատ գունավոր հարթ թիթեղ d=0.55մմ	մ²	19.0	5.998	113.965	
4	Կախովի ջրհորդանի տեղադրում ցինկապատ գունավոր թիթեղից	գմ	16	2.938	47.006	
5	Ձագարների իրականացում գունավոր ցինկապատ թիթեղից	կ-տ	3	6.793	20.380	
6	Ջրահեռացման խողովակների իրականացում ցինկապատ գունավոր թիթեղից 80x100մմ	գմ	9	3.355	30.198	
7	Խարամի շերտի իրականացում	մ³	1.3	6.175	8.027	

8	Ցեմենտ-ավազային հարթեցնող շերտի իրականացում h=50մմ	մ²	27.00	2.191	59.149	
9	Ամրանային ցանցի տեղադրում	տ	0.027	37.239	0.995	
10	Մետաղական ցանցի արժեքը Φ 3ВрI 100x100մմ բջիջներով	մ²	27.0	0.720	19.452	
11	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոգամից 3մմ հաստ. 2 շերտ /վերին շերտը ավազային պաշտպանիչ շերտով/	մ²	27.0	2.560	69.129	
	Ընդամենը %				**523.485**	6.39%
	<u>Աստիճանների կառուցում</u>					
1	Խճի նախապատրաստական շերտի իրականացում ֆրակցիա՝ 10-20մմ, 20-40մմ, հարթակի ծածկույթի տակ 150մմ հաստությամբ տոգորած բիտումային մածուծանով	մ²	8.67	2.674	23.178	
2	Աստիճանների խամքարաբետոնե հիմքի պատրաստում, B12.5 դասի բետոնով	մ³	2.5	31.928	79.819	

3	Ամրանավորված բետոնե սալի պատրաստում B12.5 դասի բետոնից 80մմ հաստությամբ	մ³	4.96	31.535	156.412	
4	Մետաղական ցանց Φ 6AcI 150x150մմ բջիջներով	տ	0.015	497.235	7.459	
5	Հարթակի և թեքահարթակի երեսապատում բազալտե սալերով 30մմ հաստությամբ /հղկված/	մ²	32	12.401	396.828	
6	Աստիճանների երեսապատում հղկված բազալտե սալերով 30մմ հաստությամբ եզրագծի մեկ կողմից աղեղային հղկումով	մ²	49.7	14.961	743.543	
7	Պատերի երեսապատում բազալտե հղկված սալերով 30մմ հաստությամբ	մ²	3.00	13.738	41.215	
8	Մետաղական ցանցի արժեքը Φ 3BpI 100x100մմ բջիջներով	մ²	3.0	0.809	2.426	
	Ընդամենը %				**1,450.878**	17.72%
	N1-2 Արտաքին էլեկտրալուսավորություն					

1	Ավտոմատ անջատիչ միաֆազ 10Ա	հատ	1	0.770	0.770	
2	ВВГ-0.4 5x1.5մմ² հատվածքով, պղնձե ջիղերով մալուխի անցկացում	գմ	130	0.971	126.286	
3	ВВГ-0.4 3x1.5մմ² հատվածքով, պղնձե ջիղերով մալուխի անցկացում	գմ	38	0.527	20.021	
4	ԼԵԴ տիպի պատի լուսարձակների տեղադրում 20վտ հզորությամբ	հատ	5	9.877	49.386	
5	ԼԵԴ տիպի լուսատուների տեղադրում առաստաղի 20վտ հզորությամբ, IP 54	հատ	5	9.877	49.386	
6	Մեկստեղնավոր անջատիչների տեղադրում	հատ	8	1.924	15.394	
7	Տուփեր ճյուղավորման	հատ	8	0.322	2.579	
8	Ճկախողովակների անցկացում մալուխի համար Φ20մմ	գմ	168	0.089	14.955	

9	Խողովակի ամրակապ	հատ	84	0.042	3.556	
10	Ճկախողովակների անկյուն 90⁰	հատ	6	0.062	0.369	
	Ընդամենը %				**282.702**	3.45%
	Ընդամենը				8,189.346	
	ԱԱՀ 20%				1,637.869	
	Ընդամենը				9,827.216	99.992%
	Սասրքավորումներ					
	N1-2 Արտաքին էլեկտրալուսավորություն					
1	Ավտոմատ անջատիչ միաֆազ 10Ա	հատ	1	0.654	0.654	
	Ընդամենը %				**0.654**	0.008%
	Ընդամենը				0.654	
	ԱԱՀ 20%				0.131	
	Ընդամենը				0.784	

Ամբողջը				9,828.000	100.0%

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան Աճառյան փ. 2-րդ նրբ. շենք 2.
հվհհ 00886932
ԱյԴի Բանկ ՓԲԸ
հ/հ 11813017106900
Հեռ. 010 61-70-90
էլ. փոստ՝ ncat.gnumner@mail.ru

(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ., 8շ., 118բն.
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300149115100
ՀՎՀՀ 01259436

էլ. փոստ՝ hakobyan.construction@mail.ru

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված թիվ 2
« 09 » 07 2021թ. կնքված
«ԿԲԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/12» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չափ. համարը	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	ՀՀ ԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎԵԼՈՒ ՊԱՀԻՑ	ՖԻՆԱՆՍԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՆԱԽԱՏԵՍՎԵԼՈՒ ՊԱՀԻՑ 45-ՐԴ ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՕՐԸ
ԸՆԴԱՄԵՆԸ		**45 օրացուցային օր**	

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան Աճառյան փ. 2-րդ նրբ. շենք 2.
հվհհ 00886932
ԱյԴի Բանկ ՓԲԸ
հ/հ 11813017106900
Հեռ. 010 61-70-90
էլ. փոստ՝ ncat.gnumner@mail.ru

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ., 8շ., 118բն.
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300149115100
ՀՎՀՀ 01259436
էլ. փոստ՝ hakobyan.construction@mail.ru

(ստորագրություն)
Կ.Տ.

** *Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N
« 09 » 07 2021թ. կնքված
ՇՄԱԿ-92ԱՀՇԱ-21/12-2 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի									
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**							
			հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
2	45461100	ՀՀ ԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ								

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*
*** հրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան Անտոյան փ. 2-ոդ նրբ. շենք 2.
հպհհ 00886932
ԱԴՔԲանկ ՓԲԸ
հ/հ 11813017306900
հեռ. 010 61-70-90
էլ. փոստ՝ ncat.gnumner@mail.ru

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ., 8շ., 118բն.
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300149115100
ՀՎՀՀ 01259436
էլ. փոստ՝ hakobyan.construction@mail.ru

/ստորագրություն/
Կ.Տ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«ԿԲԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/12-2» ծածկագրով 2021 թվականի հուլիսի 9-ին կնքված պայմանագրի

ք. Երևան **09 հուլիս 2021թ.**

Կախվածությունների բուժման ազգային կենտրոն ՓԲԸ-ը ի դեմս տնօրեն Ս. Նազինյանի, որը գործում է Կախվածությունների բուժման ազգային կենտրոն ՓԲԸ-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Պատվիրատու», մի կողմից, և <<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Սերգեյ Հակոբյանի /ՆՔ 000596213,տրված 012-ի կողմից, 06.11.2013թ./, որը գործում է <<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ -ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Կապալառու» մյուս կողմից, հիմք ընդունելով կողմերի միջև ***«ԿԲԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/12-2»*** ծածկագրով ***2021 թվականի հուլիսի 9***-ին կնքված պայմանագրի /այսուհետ Պայմանագիր/ 8.15 կետով սահմանված դրույթները և պահպանելով ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի 56-րդ կետով նախատեսված պահանջները որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը /այսուհետ Համաձայնագիր/ հետևյալի մասին:

I. Համաձայնագրի առարկան

1. Հետագա համագործակցության համար Կողմերը որոշեցին Պայմանագրով սահմանված աշխատանքների կատարման համար նախատեսել է ֆինանսական միջոցներ և Պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները՝

1.1. Փոփոխել Պայմանագրի թիվ 2 և թիվ 3 հավելվածները և հաստատել դրանք նոր խմբագրությամբ համաձայն Համաձայնագրի թիվ 2 թիվ 3 հավելվածների.

II. Այլ պայմաններ

2. Համաձայնագիրը համարվում է Պայմանագրի անբաժանելի մաս: Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից: Համաձայնագրում չնշված կողմերի գնման Պայմանագրով նախատեսված մյուս կետերը մնում են անփոփոխ: Համաձյանագիրը կազմված է ___ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ: Համաձայնագրի թիվ 1 հավելվածը, համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ	<<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
ք. Երևան Աճառյան փ. 2-րդ նրբ. շենք 2.	ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ., 8շ., 118բն.
հվհհ 00886932	«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
ԱյԴի Բանկ ՓԲԸ	Հ/Հ 19300149115100
հ/հ 11813017106900	ՀՎՀՀ 01259436
Հեռ. 010 61-70-90	
էլ. փոստ՝ ncat.gnumner@mail.ru	էլ. փոստ՝ hakobyan.construction@mail.ru
_____ (ստորագրություն) L.S.	_____ (ստորագրություն) L.S.

Հավելված թիվ 2
«09» հուլիս 2021թ. կնքված
«ԿԲԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/12-2» ծածկագրով պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Չափ. համար	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը**	
		Սկիզբը	Ավարտը
2	ՀՀ ԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	**09.07.2021**	**23.08.2021**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան Աճառյան փ. 2-րդ նրբ. շենք 2.
հվհհ 00886932
ԱյԴի Բանկ ՓԲԸ
հ/հ 11813017106900
Հեռ. 010 61-70-90
էլ. փոստ՝ ncat.gnumner@mail.ru

(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
<<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ., 8շ., 118բն.
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300149115100
ՀՎՀՀ 01259436
էլ. փոստ՝ hakobyan.construction@mail.ru

(ստորագրություն)
Կ.Տ.

*** Եթե պայմանագիրը կնքվում է "Գնումների մասին" ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա <<Սկիզբը>> սյունակում ժամկետի սկիզբը նշվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը:*

Հավելված N
«09» հուլիս 2021թ. կնքված
***«ԿԲԱԿ-ԳՀԱՇՁԲ-21/12-2»** ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի					
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**		
			հուլիս	օգոստոս	Ընդամենը
2	45461100	ՀՀ ԱՆ ԿԱԽՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒԺՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ ՓԲԸ ՇԵՆՔԻ ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	50%	100%	100%
			4914000	9828000	9828000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ԱՆ «Կախվածությունների բուժման ազգային կենտրոն» ՓԲԸ
ք. Երևան Աճառյան փ. 2-րդ նրբ. շենք 2.
հսկհ 00886932
ԱՅԳԻ Բանկ ՓԲԸ
հ/հ 1181301710690 0
Հեռ. 010 61-70-90
էլ. փոստ՝ ncat.gnumner@mail.ru

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<ՀԱԿՈԲՅԱՆ ՔՈՆՍԹՐԱՔՇՆ>> ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Բաշինջաղյան 2-րդ նրբ., 8շ., 118բն.
«Կոնվերս Բանկ» ՓԲԸ
Հ/Հ 19300149115100
ՀՎՀՀ 01259436
էլ. փոստ՝ hakobyan.construction@mail.ru

(ստորագրություն)